

Աստուծոյ Որդի յայտարարեցին եւ մտորի մէջ ծածկուածը որպէս ամէնուն տէրը քարոզեցին, եւ ան որ այրին մէջ կծկուած կը քազմէր, ակամայ որպէս Աստուած ցոյց տուին: Անոնք երախտաւորներ եղան, ո՛չ կամովին, քարեկամներ՝ ո՛չ իրենց համոզումով, որովհետեւ անոնք կ'ուզէին պահել, քայց յայտնեցին եւ չհաւատացին:

Կը տեսնե՞ս տգէտները՝ ուսուցիչ դարձան, որովհետեւ չեն գիտեր այն ինչ որ կ'ուսուցանեն: Իրենք քաղցած՝ ուրիշներու ջուր կու տան:

Թրգմն.

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ

Ո՞ՒՐ Կ'ԵՐԹԱՆ ՍԱՏԱՆԱՆ ԵՒ ԳՈՂԸ

Ինչպէս սատանան չի մօտենար չարերուն, գիտնալով որ անոնք արդէն կալանուած են իր ծուղակին մէջ, կը նախընտրէ օրումն թուր ժամերուն դառնալ պարկեշտ ու բարի մարդոց շուրջը, որոնք կ'ապրին Աստուծոյ սիրոյ օրէնքին համաձայն:

Գողն ալ չ'երթար հոն ուր խոտ ու փայտ կայ, այլ կը մտնէ հոյաշէն տունները, ուր վստահ է, թէ պահուած գանձեր կան, արծաթ, ոսկի, աղամանդ:

Հին ու նոր Կտակարանները գոյգ թիերն են հաւատացեալին, որոնք պէտք է գործածէ երկուքն ալ միաժամանակ, որպէսզի իր գոյութեան նաւակը անվտանգ առաջնորդէ դէպի երկնային նաւահանգիստը:

Առանց աչդ երկու թիերուն գործածութեան անկարելի է կատարել ապահով նաւարկութիւն մեղքի ալեկոծ ծովուն վրայ:

Վարդան Ա. Քենյ.

Տիւկէրեան

Մանրավէպեր էջ 40